

մարդիկ էին: Նոյնիսկ կ'ըսուի թէ անոնք հայ նշանաւոր հեղինակներու գործերը վերատպելու նպատակ ունէին՝ այդպէս չարամտօրէն կաթողիկ դաւանանքի ամբողջման նպատաւորելու համար (այսինքն՝ հայ-կաթողիկներու): Այս է բուն աղբիւրը վերոյիշեալ դժուարութեանց, որոնց պատճառները ասոնք են.—

«Ա) Ֆրանկ անունը այս երկրին մէջ կը ծառայէ զատորոշելու ժողովուրդները, որոնք ազատ են խարածէն: Հայերը իրենց եղբայրները կը զրպարտեն զանոնք ֆրանկ կոչելով, մինչ բոլորն ալ նոյն ծէսը կը դաւանին՝ տարբերելով միայն դաւանութեանց մէջ:

«Բ) Քաղկեդոնի ժողովը, որ չորրորդ ընդհանրական ժողովն էր, ընդունուած եւ յարգուած ըլլալով բոլոր քրիստոնեայ ժողովուրդներէն, բացի քիչ ինչ հայերէ, որոնց մասին է որ հոս կը խօսինք: Ես կը խորհիմ թէ բոլոր եւրոպացիներս այս երկրէն պէտք է նկատենք այս ժողովին պաշտպանութեան համար հալածուած բոլոր հայերը, իրր Յիսուս Քրիստոսի ճշմարտութեան համար հալածեալ եղբայրներ:

«Գ) Նոյնիսկ անտարակոյս թուրքերը կը պժգան անոնցմէ, որոնք (կաթողիկ) վարդապետութեան հակառակ կը դաւանին եւ կը յանդգնին սորվեցնել, թէ Աստուած մեռաւ մարդոց համար, առանց բացատրել կարենալու, թէ իր մահը սըրբութեան միացեալ մարդկային նկարագրի մահ էր, քանի որ չեն թոյլատրեր այդ բնութեան անջատ մնալը Յիսուս Քրիստոսի մէջ իր մարմնացումէն յետոյ: Ո՞վ չպիտի զարմանայ՝ առանց սահմուկելու, երբ իմանայ, թէ Աստուած մեռաւ եւ չարչարուեցաւ որեւէ տարբեր մտքով, մարդկային բնութենէն տարբեր: Մասնաւորապէս թուրքերը պիտի կարենան վիրաւորել՝ ըսելով որ Յիսուս Քրիստոս իրապէս խաչին վրայ մեռաւ, թէ եւ անոնք զինքը իրր Որդին Աստուծոյ չեն ընդունիր, այլ միայն մեծ մարգարէ մը: Ի՞նչպէ՞ կ'ըլլայ որ անոնք (հայերը)

չեն ամչնար վրէժխնդրութեան միջոց մը ըլլալ անոնց, որոնք կը քարոզեն թէ Աստուած մեռաւ այն մտքով, որ մենք հոս բացատրեցինք:

«Դ.) Անտարակոյս, թէ եւ քրիստոնեայ երկիրներուն մէջ ժողովուրդը շատ պիտի զայրանայ՝ իմանալով այս պատճառաւ թուրքերուն գործած անգթութեանց մասին, որոնց ազմուկը նոյնիսկ վեհապետ իշխաններուն արքունիքներէն ներս կրնայ թափանցել, եւ պատմութեան մէջ կրնայ արձանագրուիլ, որ թուրքերուն ոչինչ բան մը կ'երեւայ, սակայն բաւական է Եւրոպան ներկայ թուրք կառավարութեան դէմ շարժելու:

«Ե.) Ուրեմն, ըստ իս, քրիստոնեայ իշխաններու բոլոր ներկայացուցիչները կրնան իրենց զարմանքը յայտարարել Մեծ Վեգիքի կամ Գայմագալի Դրան մասին, որ նախապէս կը դաւանէր ազատութիւն կրօնից հանդէպ, իսկ այժմ կը հալածէ պատուաւոր մարդիկ՝ այդպէս նախընտրելով (դաւանական) սխալ մը կամ աւելի ճիշտ հայհոյանք մը, որ այնքա՞ն ծիծաղելի է, որպիսին են միաբնակութիւնը եւ քեոքանականութիւնը, — տրուած անուն մը որ միշտ հերետիկոսներուն տրուած է, որոնց մասին հոս կը խօսինք (իմ հայեր):

«Զ.) Հուսկ պէտք է կարելի եղածին չափ շուտ նկատել տալ հայ եկեղեցիներուն, որ մենք ալ մասնակից ենք այս խնդրոյն, եւ այս կէտին մէջ իրենց ըսածին ու ըրածին համար ուշադիր պէտք է ըլլան նաեւ միջոցներ ձեռք առնելու՝ արգելելու համար Վեգիքի Խանի հայ տպագրին վտանդաւոր նպատակները»³⁹⁾:

Այսքան է այս յուշագիրը, որուն հեղինակին անունը կը պակսի, թէ եւ կարելի է խորհիլ, թէ Յիսուսեան Վիլլօդէի Պարսկաստանէն Կ. Պոլսոյ ֆրանսական զեպանութեան զրկած յուշագիրն է, որու մասին կը յիշէ ուղեգիր Մոթլերէյ, ինչ-